

ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՀԱՄԱԼՐՎԵՑ ՆՈՐ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐՈՎ

30.04.2016 17:32



«Այսօր փաստաբանը հեղինակություն է և ես երջանիկ եմ ու շնորհակալ մասնագիտական այդ հպարտությունը կրողի ինքնավստահության համար, որ դուք վաստակել ու նվիրել եք մեզ», - ապրիլի 30-ին ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին այս խոսքերով է դիմել ՀՀ փաստաբանական դպրոցի նախկին ունկնդիր և արդեն փաստաբանի արտոնագիր ստացած Լուսինե Գրիգորյանը: Լուսինե Գրիգորյանը նշել է, որ փաստաբան դառնալն իր մանկական երազանքն է եղել, որն իրագործվել է այսօր:

Ելույթ է ունեցել նաև ՀՀ փաստաբանական դպրոցի շրջանավարտ Ստեփան Խզրթյանը, ով կարևորելով փաստաբանների դերը, նշել է, որ ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունված անդամ օրենքներն ի վերջո փաստաբանների միջամտությամբ են դատարանների կողմից կիրառվում՝ մասնավոր գործերի միջոցով:

Փաստաբանների պալատի խորհրդի նիստի այսօրվա օրակարգում միակ հարցի քննարկման ժամանակ ներկայացված որոշման եզրափակիչ մասը, այն է՝ հավակնորդների՝ արտոնագրեր ստանալու մասին դիմումները բավարարել և հավակնորդներին տրամադրել փաստաբանական գործունեության արտոնագրեր, ընդունվել է միաձայն: Փաստաբանական դպրոցի 62 շրջանավարտ երդվել են Փաստաբանների պալատի խորհրդի առջև՝ դառնալով փաստաբան:

Մինչև արտոնագրեր հանձնելը շրջանավարտներին ողջունել և շնորհավորել է ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը՝ իրողորդելով հետագա գործունեության ընթացքում բարձր պահել փաստաբանի պատիվը: «Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն վստահորդների հանձնարարությունների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանը հատուկ դեր է ստանձնել հասարակությունում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Կասադո Կոկան ընդդեմ Իսպանիայի գործով կայացված վճռով, նշվել է, որ փաստաբանը հանդիսանում է միջնորդ հասարակության և արդարադատություն իրականացնող մարմնի միջև, ինչով պայմանավորված՝ հատուկ կարգավիճակ ունի: Միջնորդ ասելով՝ նկատի չունեն կոռուպցիոն գործարքների միջնորդ, այլ մասնագետ, ով իր վստահորդի շահերը ներկայացնում է դատարանում: », - նշել է նա՝ հավելելով, որ փաստաբանն իր աշխատանքով պետք է բացառի կոռուպցիոն ռիսկերը: Նա փաստաբաններին նաև մասնագիտական համերաշխության կոչ է արել:

Շրջանավարտներին փաստաբան դառնալու կապակցությամբ շնորհավորել են նաև Փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանը, Փաստաբանների պալատի խորհրդի անդամներ Կարեն Մեժլումյանը, Մարտուն Փանոսյանը, Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի անդամ Սեդրակ Ասատրյանը:







```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```